Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/37512/02/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«02» օգոստոսի 2022թ. ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանս, քննարկելով վարույթում գտնվող քաղաքացիական գործով ըստ հայցի՝ <<ԼԵԴՍ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար համակարգչային սերվերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ <<ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին, ՀՀ արդարադատության նախարարի կողմից ներկայացված միջնորդությունը՝ թիվ <<ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49>> ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

<<ԼԵԴՍ>> ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար համակարգչային սերվերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ <<ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին:

Դատարանի 28/07/2022թ. որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ և հրավիրվել է դատական նիստ:

Պատասխանող՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 01/07/2022թ. դատարան է մուտքագրվել միջնորդություն՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ, որով հայտնել են, որ «Ձեր վարույթում է գտնվում թիվ ԵԴ/37512/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԼԵԴՍ» ՍՊԸ-ի ընդդեմ Արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն)՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար համակարգչային սերվերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Ուսումնասիրելով «ԼԵԴՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումը և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը համադրելով կիրառման ենթակա իրավանորմերի հետ՝ գտնում ենք, որ օրենքի ուժով կասեցված թիվ «ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49» ծածկագրով գնման գործընթացը պետք է շարունակել հետևյալ պատճառաբանությամբ.

Վկայակոչել է՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետև՝ Ծառայություն) հանդիսանալով Նախարարությանը ենթակա մարմին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով ապահովում է կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը: Ընդ որում՝ Ծառայությունը տարեկան ընթացքում է մշակում ավելի քան երկուս ու կես միլիոն կատարողական վարույթների, որոնց շրջանակներում կատարողական գործողությունները հիմնականում իրականացվում են էլեկտրոնային եղանակով: Դատական

արգելադրում, բռնագանձում և այլն): Կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի կիրառումն անհնար է առանց հուսալի, ապահով սերվերային հանգույցների:

Ծառայության սերվերային հանգույցը ձևավորվել է դեռևս 2004 թվականին, երբ կատարողական գործողությունների հիմքը եղել է միայն դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը: Մինչդեռ տարեցտարի կատարման ենթակա ակտերի շրջանակի ընդլայնմամբ ավելացել է առկա սերվերի ծանրաբեռնվածությունը՝ դժվարացնելով դրա աշխատանքը, ինչը ներկայումս ցանկացած պահին կարող է հանգեցնել սերվերի վերջնական խափանման, որն էլ իր հերթին առաջացնելու է անդառնալի հետևանքներ (մասնավորապես՝ կատարողական վարույթների իրականացման անհնարինություն, կատարման ենթակա ակտերի անկատար մնալը, դրա հետևանքով վնասի հատուցման պահանջի ներկայացման ռիսկերի բարձրացում, պարտապանի և պահանջատիրոջ անձնական տվյալների կորուստ և այլն):

Նպատակ ունենալով կանխելու նշված ռիսկերը, ինչպես նաև կատարողական վարույթի շրջանակներում կիրառվող գործիքակազմերը ընդլայնելու և կատարողական վարույթը ամբողջապես թվայնացնելու նպատակի իրացման ճանապարհին, նախարարությունը թիվ «ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49» ծածկագրով հայտարարել է բաց մրցույթ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար համակարգչային սերվեր ձեռքբերելու համար:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ նոր համակարգչային սերվերի օր առաջ ձեռքբերումը և գնման գործընթացի շարունակությունը կենսական նշանակություն ունի Ծառայության՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման համար, և բխում է բացառապես հանրային շահից, ուստիև գնման գործընթացի նույնիսկ մեկ օրով կասեցումը կարող է հանգեցնել Ծառայության բնականոն աշխատանքի պարալիզացմանը, միլիոնավոր ակտերի անկատար մնալուն՝ խախտվելով շահառուների՝ Սահմանադրությամբ պաշտպանվող իրավունքները: Հետևաբար, գտնում եմ, որ թիվ «ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49» ծածկագրով գնման գործընթացը պետք է շարունակել ելնելով հանրային շահերից:

Վերոգրյալի լույսի ներքո և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում եմ կայացնել գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում, և այդ որոշումը անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ 1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը: 2. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների դեպքում, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Ուսումնասիրելով միջնորդությունը և ելնելով գործի հանգամանքներից, դատարանը գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ օգտագործվող սերվերները հնամաշ են, առկա է ծանրաբեռվածություն, որը կարող է հանգեցնել սերվերների վերջնական խափանմանը՝ իր բոլոր միջնորդութմաբ նշված բացասական և անդառնալի հետևանքներով:

Ուստի՝ թիվ <<ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49>> ծածկագրով գնման գործընթացի կասեցման վերացումը բացառապես բխում է հանրային շահից, հետևաբար դատարանը գտնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածով, դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել՝ վերացնել թիվ «ՀՀԱՆ-ՀԲՄԱՊՁԲ-ՀՍ-22/49» ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ. ՆԵՍՍԻՍՅԱՆ**